

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Ստանդին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայնակ, կարգադրություն մէջ:
Ստորագրողացիք պիտոմ են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)
Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Հայտարարութիւն ընդունվում են համար. վճարում են
խորտրոմիչուր յոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տնտեսական խնդիր: Ֆրանսիա:
Արտաքին լուրեր: ՀՆՈՒՊԻՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՆ:
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՌԻՐԱԿԱՆ. ՄԵ պատաս-
խան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Հոկտեմբերի 25

«Մշակ» № 196 մէջ տպւեցաւ մեր ընկերու-
րից մէկի յօդուածը չքաւոր աշակերտների վե-
րաբերութեամբ: Պէտք է յաճախակի արծարծել
այս օրովայ հարցը դառնող խնդրը, ուստի և
հարկաւոր է աւելի շատ տեղեկութիւններ հա-
ղորդել սրա մասին, պարզել հարցի դրութիւնը
և պահանջներն համաձայն միջոցներ մը-
տածել: Այս բանը ես չեմ առնում իմ վրա, որ
ոյժիցս վեր կը լինէր, այլ կամենում եմ մի քանի
խօսք աւել այս մեր սրտին շատ մօտիկ առար-
կայի վերաբերութեամբ, իբրեւ պատասխան Սիմ.
Տէր-Գրիգորեանցի նամակին:

Ես ինքս էլ անհեկակից եմ եղել այնպիսի աղ-
քատ աշակերտների հետ, որոնք ստանալիս են
եղել ամսական ամենաշատ 15 ռուբլի կամ և ոչ
մի կոպեկ, այլ ապրել են վանազան մասնաւոր
դասերով, որոնք շատ դժուարութեամբ են ձար-
վում: Աղքատ աշակերտների դրութիւնը բարեւո-
քելու համար Սիմ. Տէր-Գրիգորեանցը առաջար-
կում է նրանց ծնողներին՝ չգոնէ հոգալ մի բա-
րեգործական ընկերութիւն հիմնելու մասին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մշակ»-ի 185 №-ում, ինչպէս յայտնի է, մենք
հրատարակեցինք մի յօդուած «Ընդհանուր հայ
ուսուցչական ժողով Թիֆլիսում» վերնագրով, ո-
րից ընթերցողները տեղեկացան, որ հոկ. 3-ին
ուսումնական յանձնաժողովը և մի քանի հրա-
ւիրվածներ ընտրեցին մի կարգադրող մասնաժո-
ղով՝ ապագայ ուսուցչական ժողովի նախապա-
րաստութիւնները տեսնելու մտքով: Ընտրութեան
և հետեանքի մանրամասնութիւնները նկարագրած
են վերոյիշեալ յօդուածում: Ի միջի այլոց այդ
յօդուածում մի նկատողութիւն էինք յայտնել,
ընտրութիւնը անաւոյ համարելով: Այս նկա-
տողութիւնը հիմնված էր այն երևոյթի վրա, որ
ծանրակշիւ մարդիկ 1 և 2 ձայն ստացան և չըն-
տրվեցան, իսկ չը համակրողները, ժողովներին
չերթնեցողները և աւելի քիչ հեղինակութիւն ու-
նեցող անձինք շատ ձայներ ստացան և ընտրվե-
ցան: Այսուհետև մեր խօսքերը մասնաւորել էինք
պ. ի. Բալանթարեանի և մասնաւոր պ. Բով.
Չիգլանեանի վրա, որը խաբաւ հրաժարվեցաւ,
անկարելի և ապարդիւն համարելով, խոչընդոտ-
ներ գնելով և մինչև անգամ ծաղրելով մի այդ-
պիսի վանձ ձեռնարկութիւն, իսկ յետոյ, երբ
տեսաւ որ մի քանի մարդոց շնորհով գործը զը-
լուի է գալիս և համակրութեան արձագանքները
հեռաւոր ծայրերից լսվում են լրագրիւններում,—
այնքան համոզմունքի տէր մարդ էր, որ նորից
ներս մտաւ և ընտրվեցաւ: Մինչև անգամ կարգա-
դրող մասնաժողովի անդամ Գ. Բով. ընթերցող-
ները հարցնեն թէ՞ «Բով. յանցանք, իբր մարդը
առաջ սխալվել էր, իսկ այժմ յետ է առնում իր
սխալը և ուղղում է մասնակցել»:

Եթէ յիշուի այդպէս լինէր, մենք, խոստո-
վանովում ենք, որ ձայն անգամ չէինք հանի:

Մի այսպիսի ընկերութիւն հիմնելու համար
նախ, հարկաւոր է նշանաւոր զբաղական միջոց,
որ աղքատ ծնողները չունեն, երկրորդ, գործի
հետ մօտիկ ծանօթութիւն և երրորդ, որ պէտք
է գործողների հանգամանքները նպատակին յար-
մար լինեն: Աղքատ և թշուառ աշակերտների
ծնողները այս բոլոր գլխաւոր պայմաններէն
զուրկ են և հետևաբար նրանց մի այսպիսի ա-
ռաջարկութիւն անել անկարելի է: Ենթադրենք,
որ հէնց յօդուածագիր հայրը այսպիսի ծնողնե-
րի թւումն է: Թէ՛ ինչպէս կարող է նրա հայրը
իր որդւո առաջարկած ընկերութեան մասին հո-
գալ, թող որդին բացատրէ խեղճ ծնողները
միայն կը վշտանան, երբ կը կարգան այս յօ-
դուածը (հարկւրց հինգը), բայց ոչինչ էական
բան չեն կարող անել իրանց թշուառ զաւակ-
ները: Դրութիւնը բարեւոքելու համար, որովհետև
նրանք միջոց չունեն:

Որտեղ հիմնեն նրանք այս ընկերութիւնը,
ինչպէս միանան այդ խեղճերը, որոնցից մէկը
Աբրահամի գիւղացի և երկրագործ է, միւսը նույն-
ցի չուխայ ծախող և այլն: Ուզում եմ ասել,
որ չքաւոր աշակերտների ծնողները մի որ և
ինչ ընկերութեան խնդիրները չեն կարող դառ-
նալ առանց առաջնորդող ոյժի—խնտեկիցնե-
ցիայի: Ծնողութեան, ընկերութիւնը պէտք է հիմն-
վի Թիֆլիսում, որովհետև կարելիք այստեղ է և
գործողները պիտի լինեն խնտեկիցնեցիայից:
Երբ արդէն կը հիմնվի մի այսպիսի ընկերու-
թիւն նրանց առաջնորդութեամբ և չնորհիւ, այն
ժամանակը ոչ միայն աղքատ ծնողներ, այլ
ամբողջ հասարակութեան վրա կը մնայ մի բա-
րոյական պարտք—կարեաց չափ նպատակ ըն-
կերութեան գոյութիւնը պահպանելու: Այն ժա-
մանակը հէնց իրանք աշակերտներն էլ կարող

են օգնել գործին: Կարելի է, ուսումնարանի
խնամութեան հովանաւորութեան ներքոյ հիմ-
նել մի հաշակերտական բարեգործական ընկե-
րութիւն, որի անդամները կը վճարեն տարե-
կան մի որոշ գումար, որը նոյնպէս կը յանձն-
վի գլխաւոր ընկերութեանը: Այսպիսի բան ան-
կարելի չէ, որովհետև հարուստ աշակերտների
թիւը սակաւ չէ ուսումնարաններում: Փանիսները
կան, որոնք ապրում են իրանց սեպհական տա-
նը, ուրեմն և ունեն կեանքի յարմարութիւն-
ներ, ստանում են ծնողներից չաբախական
5—10 ռուբլի մանր ծախսի փող, ֆայետոննե-
րով ամեն օր շրջում են «Սան-Սուսի» և այլ
տեղեր, բայց էլի ոչ միայն իրանք չեն օգնում
իրանց հետ մի սեղանի մօտ նստող թշուառ
ընկերին, այլ անգամ մօտաւոր դասեր են խը-
լում նրանց ձեռքից: Այսպիսիներէն ծնողները
չեն հասկացրել երբեք, ինչ է ընկերական կամ
հասարակական պարտք, որովհետև իրանք չառ-
քիչ են հասկանում: Եթէ աշակերտների դէպի
միմեանց ունեցած յարաբերութիւնները լինեն
աւելի մօտերիմ, քան այժմ, այն ժամանակ շատ
րուբլներ, որոնք անընդհատ մտնում են կա-
ռուպանների գրպանները, կը գործադրվեն աւե-
լի օգտաւէտ գործի վրա: «Մտերմութիւն» բառը
օտարոտի կը թվի աշակերտներին, որոնք սովոր
են միշտ պարագիւր միայն բամբասանքներով, ե-
րեխայական ծաղրաբանութիւններով և դաւա-
ճանութիւններով ընկերական յարաբերութեանց
մէջ: Բայց ես հեռացայ նպատակիցս, ուստի
դառնալով դէպի մեր խնդիրը, աւելացնում եմ.
Թող Թիֆլիսի խնտեկիցնեցիան ունենայ փոքր
ինչ մարդասիրական զգացմունք դէպի ապագայ
հայ սերունդը և հայ ժողովուրդը, թող ունենայ
կենդանի ինչի՞նչ և գիտակցութիւն իր հասարա-

կական պարտքերը ճանաչելու,—այն ժամանակ
նիւթապէս և բարոյապէս ճնշված աղքատ աշա-
կերտները ցամաք հացով չեն կերակրվի իրանց
անտանելի աշակերտութեան ժամանակ: Հաւաս-
տի ենք, որ «Մշակը» առանձին ուշադրութիւն
կը դարձնէ աղքատ աշակերտների դրութեան
բարեւոքման հարցի վրա, որի կարեւորութիւնը
օրից օր աւելի զգալի է դառնում մեզանում:

Գ. Խաչատրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 հոկտեմբերի

Կարդացի պատուական «Մշակ» այսօրվայ
համարում, որ դուք պահանջում էք ինձից բա-
ցատրութիւն ձեզ յանձնած 94 ռուբլի 18 կոպեկ
գումարի համար:

Ներկայ նամակաւ յայտնում եմ ձեզ, որ այդ
գումարը ձեզ յանձնեցի թաղիքին պ. Թումա-
նեանց տան յանձնարարութեամբ յօդուտ սովե-
լոց: և ինձ ամենեկին յայտնի չէ թէ այդ դումա-
րի մէջ «Մասիս» բաժանորդագրութեան փող
կայ թէ ոչ:

Տիգրան Տէր-Յանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ՆՈՒԹՈՒՑ: «Քանի որ մոմա-
վաճառութիւնը, որի արդիւնքը յատկացրած է
հոգեւոր ուսումնարանին, գտնուում էր հայ ու-
սումնարանի հոգաբարձու մի պարտնի ձեռքում,
նա տարեկան 90 ռուբլ արդիւնք էր տալիս,
բայց հէնց որ անցաւ մի քանի օրերից սօտար մար-

էր, որ մի փոքր դարձնենք հասարակութեան
ուշադրութիւնը մեր ծխական դպրոցների ուսու-
ցիչների թշուառ դրութեան վրա և փարատենք
շատերի այն մոլար կարծիքը թէ՛ ծխական դպ-
րոցները—այդ Ներս. դպրոցի ստորին յարկերն
են, նրա գեանափորներն են և ուրեմն նրա ծա-
ռայողներն էլ՝ գեանափորի մէջ ապրող անչուս,
բորբոսած և խաւար մարդիկ են: Ուրիշ բան է,
ի հարկէ, եթէ պարտը խօսել ծխական դպրոց-
ների նիւթապէս անապահովութեան վրա և նը-
րանց ուսուցիչներին թշուառ դրութեան վրա, որ
մենք վիճակագրական թւերով մի առ մի նկա-
րագրել էինք նոյն յօդուածում («Մշակ» 37):

Մեր վերոյիշեալ նկատողութեան դէմ մեր հա-
կառուցողները չը զբաղան իրանց պատասխան-
ներով հանդէս դուրս դալ: Ես կը բերեմ այս-
տեղ այն կտորները, որոնք պատասխանների
գլխաւոր կողմերն են. 1) ասում են, օրինակ,
«Ծխական դպրոցները չը կարողանալով կեանքի
համար զարգացած անհատներ և հասարակու-
թեան պատուաւոր (!) անդամներ պատրաստել՝
քնականաբար իրանց սաները պէտք է ուղարկեն
Ներս. դպրոց, չը մոռանալով, որ այստեղ մըտ-
նում են քաղաքի ստորին արհեստաւորաց դա-
սակարգի դաւանները, որոնց ծխական դպրոցը
բացի գրել—կարդալ—հաշուելուց, ոչինչ չէ տա-
լիս: 2) Մենք ուրախ պէտք է լինենք, որ պ.
Նահապետեանը արժանացրել է (!) իր ու-
շադրութիւնը ծխական դպրոցների վրա:

Ինչպէս տեսնում էք պարտները շատ հեշտ
կերպով են մէռում այն խնդրը, որը զբաղեց-
րել է թեմական տեսուչներին զանազան ժամա-
նակներում և որը դեռ լուծված չէ: Մեր հակա-
ռակողների կարծիքով մեր ծխականները ոչ
թէ ընդհանուր տարրական դրթութիւն տուող
հիմնարկութիւններ են, այլ լոկ կրթի—կարդալ—
հաշուել սովորեցնելու համար են և երկրորդ—
ստորին արհեստաւորաց դասակարգի զաւակները,
որոնք դեռ 2—3 տարուց յետոյ թողնում են
դպրոցը, նրանց կարծիքով 8—10 տարի էլ դեռ
Ներսիսեան դպրոցում են մնում,— Մենք ոչ

ներս սեպ. 31-ին չը կայացաւ ուսումնական
յանձնաժողովը նիստը, որովհետև 9 հոգի էին և
կէր, և երբ ցուցակագրում էին հրաւիրելու հե-
տեւալ նիստին բացի ուսումնական յանձնաժո-
ղով անդամներից և ուրիշներին, մէկը միայն
առաջարկեց պ. Բով. Չիգլանեանին. իսկպէս
օրան չէին ցուցակագրում, յայտնելով որ նա
վաղուց հրաժարվել է գործից և չէ ցանկացել
մասնակցել, բայց երբ պարտը գրվեցաւ և եկաւ
հետեւալ նիստին, ապա ինքը ոչինչ չը չինած
առաջարկեց ժողովում, որ անցեալ տարվայ ընտ-
րած ուսումնական յանձնաժողովները լուծվեն
բոլորովին:

Մի այսպիսի ծիծաղելի առաջարկութեան հա-
մար ի հարկէ պարտը ստացաւ իր արժանի պա-
տասխանը նախագահից, որը յայտնեց նրան, որ
ինքը (Չիգլանեան) հրաժարվել էր գործից և ո-
չինչ էլ չէր չինել, ուրեմն ինչ իրաւունք ունի
մի այդպիսի առաջարկութիւն անելու: Ահա այս
վիատար մենք յիշեցինք: Մեր այսպիսի մի պարզ
և բնական նկատողութեան դէմ դուրս եկեալ եկել
այլ և այլ պատասխաններ, որոնց մենք մեր կող-
մից աւելորդ ենք համարում անմիջապէս պա-
տասխանելու:

Գեռ «Մշակ» № 37 մէջ «Ներսիսեան դպրոցի
տարեգրքի աւելթիւմ» յօդուածում մենք մի նը-
կատողութիւն էինք յայտնել պ. Ա. Նահապե-
տեանի ծխական դպրոցների և ուսուցիչների վը-
րէմ նրա յայտնած սխալ և չափազանց կարծիքի
դէմ, որտեղ պարտը յայտնել էր, որ մեր ծխա-
կան դպրոցները ապարդիւն են, ուսուցիչները
ուսում չեն սովորեցնում, անկանոն են, նրա
հա մար, որ նրանց աշակերտները չեն կարո-
ղաւում մտնել Ներսիսի. դպրոցի առա-
ջին դաստառուն: Մենք այսպիսի մի կարծիք
համարել էինք անտեղի և սխալ, բերելով հետե-
ւեալ փաստերը. 1) Մեր ծխական դպրոցները
Ներսիսեան դպրոցի պատրաստականները չեն
դեռ այդ խնդրի է. ընդհակառակն աչքի առաջ
ունենում այն հանգամանքը, որ ծխական դպրոցի
խեղճ աշակերտները 2—3 տարի մնալով թող-

նում են դպրոցը և գործի են կանգնում ընտա-
նիքին օգնելու մտքով և միայն շատ քիչերին է
յաջողվում շարունակել ուսումն, —ծխական դպ-
րոցները աւելի մի ամփոփ ծրագիր ունեցող հիմ-
նարկութիւններ պէտք է լինեն և պէտք է հա-
մապատասխանեն աւելի աշակերտների պահան-
ջին, քան թէ Ներսիսեան դպրոցը մտնելուն: 2)
Այն աշակերտները, որոնք հանգամանքների բեր-
մունքով մտել են Ներսիսեան դպրոց, նրանք
միշտ առաջին և յառաջագէժ աշակերտներն են
եղել դպրոցի, որը ապագայ է ծխական դպրոցի
ուսուցիչների բարեխիղճ աշխատութեանց: 3)
Եթէ մինչև անգամ ենթադրենք, որ ծխական
դպրոցի ուսուցիչները ոչինչ չեն չինում և միայն
առաջին դասատուն մտնում են Ներս. դպրոցի
3-դ պատրաստականի աշակերտները—ապա այդ
մի զարմանալի բան չէ նախ՝ որովհետև մեր ծը-
խական դպրոցի ուսուցիչները միջին թիւով 325
րուբլ են ստանում, իսկ Ներս. դպրոցի պատ-
րաստականի ուսուցիչները՝ 800 ռ., այսինքն 500
րուբլ աւելի և հաւանական է, որ լաւ ուսուցիչ
աւելի լաւ ուսուցիչ կարելի է վարձել և երկրորդ
որ մեր ծխականները մի դասատուն մէջ 2—3
բաժանմունք ունեն, իսկ Ներս. դպրոցի պատ-
րաստականները մի մի բաժանմունքից են կազմ-
ված. այս այնպիսի մի մեծ զանազանութիւն է,
որ այն, ինչ որ ծխական դպրոցի ուսուցիչը կա-
րող է սովորեցնել 2 կամ 3 տարում, այն մի և
նոյնը պէտք է Ներս. դպրոցի պատրաստականը
մի տարում միայն սովորեցնէ, որովհետև մէկ
տեղ մի ժամը ամբողջութեամբ է գործ զըն-
վում, իսկ միւս տեղ, բաժանմունքների պատ-
ճառով, մի ժամը 2—3 կտոր է լինում: Ահա այս
հանգամանքները աչքի առաջ ունենլով և գործը
աւելի մօտ և աւելի իրական կէտից քննելով,
մենք անտեղի էինք համարել պ. Նահապետեանի
արած յանդիմանութիւնը մեր ծխական դպրոցի
խեղճ ուսուցիչներին, որոնք իրանց սահմանե-
րում այնքան վատ չեն և ընդհակառակն կարօտ
են աւելի բարոյական խրախոյանքի: Մեր վերո-
յիշեալ նկատողութեան նպատակն միայն այն

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.